

րեստանի մէջ ևս տիրապետեցին հիւսիսային Խալտէական² սե-
րունդները, ու իրենց կողմէն նպաստեցին Ասորական պետու-
թեան զարգացման :

Նոր հետազօտիչները Քիւրդական ցեղերու մէջ կը գտնեն
այն արտայայտիչ և գերազանցօրէն գեղեցիկ տիպը, որ ճիւղա-
ւորութեամբ առաջ եկած է ասորական թագաւորներէ և ուղ-
միկներէ : Ուսումնասիրութիւնները կը պահպանեն այս կար-
ծիքը Խալտէացիներու Իրանեան ծագման մասին, Միխայէլիսի
և Շլէյցէրի ժամանակէն :

Նոր ժամանակներիս մէջ այդ կարծիքները հզօրապէս
պաշտպանուեցան Կունիկէն (*) և յետոյ Ռընանէն (**):

Այս երկու ուսումնասիրութիւնները այն կարծիքէն են,
որ Իրանեան տարրերը Տիգրիս-Եփրատեան հին պետութիւն-
ներու պատմութեան մէջ նշանակելի գոյութիւն մը չթողնելուն
համար, չէ կարելի հասկնալ այն բարձր նշանակութիւնը որ
անոնք ունին մեր քաղաքակրթութեան պատմութեան մէջ :

Եթէ հարցը այն հիւսիսային Խալտէացիներու վերջերը
եղած մասնակցութեան մասին է, որոնք ինչքան տիրապետեցին
իրենց ցեղակից մարտիկներու հետ, այնքան նշանակելի գերա-
կշուութիւն ունեցան Ասորական և Բաբելոնական գործերուն
մէջ, որ արդէն այդ ինքնին կը ներկայացնէ մեծ շահագրգռու-
թիւն, Իսկ միւս կողմէ այդ շահագրգռութիւնը պէտք է գեւ-
բարձրանայ մեր ժամանակը, ուր գործը կը վերաբերի արեւ-
ելկեան ցեղերու նոր ու բարձր կեանքի յատուկ վերակենդա-
նութեան,

Տարակոյս չկայ որ Արեմտեան Ասիոյ քանի մը ցեղերէն
որոնք իրենց յոյսը դրած են այդ առնչական յարաբերութեանց

(*) Bull. historico philol. TIX. comp. 249 et Mil. Asiat. TI. comp. 531.

(**) E. Renan. Histoire générale et système composé des langues sémitiques 1re partie (1855. 8 Paris) comp. 27—34—54—62 ch.